

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՄԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՍԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՍԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

4 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ ստորագրված՝ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի օգոստոսի 26-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետագոտելով վարկային համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի մայիսի 23-ին:

2. Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է տասնհինգ միլիոն (15.000.000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով: Փակման ամսաթիվն է 2019 թվականի սեպտեմբերի 30-ը:

Ծրագրի նպատակներն են՝ բարելավել Վարկառուի տարրական դպրոց ընդունվող երեխաների պատրաստվածությունը դպրոցին, բարելավել ֆիզիկական պայմանները եւ կրթական ռեսուրսների մատչելիությունը Վարկառուի ավագ դպրոցներում, աջակցել կրթության բարելավված որակին եւ համապատասխանությանը Վարկառուի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ծրագիրը կազմված է հետեւյալ բաղադրիչներից.

- հանրակրթության որակի բարձրացում.

- բարձրագույն ուսումնական հաստատությունների Նորարարությունների մրցակցային հիմնադրամի լիարժեք գործունեության ծավալում.

- Ծրագրի կառավարում, մշտադիտարկում եւ գնահատում:

Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուրքսաներորդ (120) օրն է:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) վճարել կանխավճար վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25 տոկոս) չափով.

բ) կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին՝ սկսած 2024 թվականի մարտի 15-ից մինչեւ 2038 թվականի մարտի

15-ը մարել վարկի հիմնական գումարը 3.33 տոկոսի չափով, իսկ 2038 թվականի սեպտեմբերի 15-ին՝ 3.43 տոկոսի չափով.

զ) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում պահպանել Կրթական ծրագրերի կենտրոնը՝ Ծրագրի պատշաճ եւ արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով.

ը) Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան մշակել եւ Բանկին ներկայացնել Ծրագրի իրականացմանն առաջարկվող ձեռնարկ.

ե) ապահովել Ծրագրի իրականացումը՝ հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն.

զ) իրականացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում ու գնահատում, պատրաստել Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով եւ ժամկետներում.

է) ապահովել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով:

**4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավարությունները, մասնավորապես, վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված լիազորություններին:**

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը եւս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման եւ Ծրագրի իրականացման ու կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավարությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին

եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ ստորագրված՝ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

4 սեպտեմբերի 2014 թվականի  
ՍԳՈ-1161